«Նոր ժամանակի կրթություն»

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՊԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ **Ուսուցչի համագործակցությունը սովորողների ծնողների կամ նրանց օրինական ներկայացուցիչների հետ՝ սովորողների կրթության կազմակերպման և ընտանեկան դաստիարակության հարցերում**

Առարկան՝ Պատմություն

Հետազոտող ուսուցիչ՝ Լուսինե Պետրոսյան

Ուսումնական հաստատություն՝ Խ. Աբովյանի անվան հ.84 հիմնական դպրոց

Երևան 2023

Հետազոտական աշխատանք

Թեմա- Ուսուցչի համագործակցությունը սովորողների ծնողների կամ նրանց օրինական ներկայացուցիչների հետ՝ սովորողների կրթության կազմակերպման և ընտանեկան դաստիարակության հարցերում

Ինչի՞ մասին ես ուզում սովորել- Ինչքանով կարող է ազդել ծնողների ներգրավվածությունը ուսուցման գործունեության արդյունավետության վրա, նրանց փոխգործակցության դերը:

Ո՞րն է թեման կամ հիմնախնդիրը- Դպրոցի կյանքում ծնողների ներգրավվածությունը առանձնահատուկ նշանակություն ունի աշակերտների հաջողության համար: Ինչպիսին էլ որ լինի ընտանիքի սոցիալ-տնտեսական կարգավիճակը, ծնողի մասնակցությունը երեխայի կրթության գործընթացին, աշակերտի զարգացման վրա մեծ ազդեցություն է գործում: Հետազոտումների համաձայն, աշակերտները, որոնց ծնողները ակտիվորեն մասնակցում են կրթական գործընթացին, ավելի լավ արդյունքների են հասնում. Ստանում են ավելի լավ գնահատականներ, ունեն ավելի բարձր ակադեմիական ձեռքբերում և ավելի որակով կատարած տնային առաջադրանքներ, նրանց հաճախման ցուցանիշն ավելի բարձր է և աչքի են ընկնում դրական վարքով, բարեհամբույր են դպրոցի նկատմամբ և ունեն սեփական ածի և հնարավորությունների նկատմամբ հավատ:

Ի՞նչ գիտես տվյալ թեմայի կամ հիմնախնդրի մասին- Երբ ծնողը ներգրավված է զավակի կրթության գործընթացում, աշակերտն ունի ավելի բարձր ակադեմիական առաջադիմություն, քննությունների և թեստերի ավելի լավ արդյունքներ: Այդ նույն ժամանակ բարելավվում է հաճախման ցուցանիշը, աշակերտի մոտ զարգանում են սոցիալական հմտությունները և նրա վարքը դրական է դառնում ինչպես տանը, այնպես էլ դպրոցում: Սրանք այն շատ կարևոր գործոններն են, որոնք ազդում են աշակերտի վրա ինչպես դպրոցում ուսանելիս, այնպես էլ ապագա մասնագիտական գործունեության ընթացքում: Սակայն, ինչպե՞ս կարող են ծնողները արդյունավետ ներգրավվել դպրոցական կյանքին, և ինչպես կարող է դպրոցը նպաստել նրանց ներգրավվածությանը: Իրականում, ի՞նչ է նշանակում «ծնողների ներգրավվածություն»:

Խաչվող հասկացությունները՝

- Ժամանակ և տարածություն
- Մտածողություն և աժեքային համակարգ
- Ազատ և արդար միտք:

Հետազոտության թեմային առնչվող բնագավառները՝

1. Մանկավարժություն
2. Դաստիարակություն
3. Հոգեբանություն

Ներածություն

Հետազոտության կարևորությունը: Դպրոցի և ընտանիքի միջև երկկողմանի, կանոնավոր հաղորդակցումը երեխայի զարգացմանը նպաստող կարևոր գործոններից մեկն է: Արդյունավետ հաղորդակցման համար անհրաժեշտ է, որ ուսուցիչը և ծնողը միմյանց հետ տեղեկություններ փոխանակեն: Մեծ մասամբ տեղեկության հաղորդման համար արդյունավետ միջոցներ են մշակված, օր. տեղեկագրեր, կայքէջեր և դպրոցի տեղեկատվական վահանակներ, որտեղ համապատասխան նյութեր/ուղերձներ են տեղադրվում: Հաճախ դպրոցներում մշակված են նմանատիպ մեխանիզմներ ծնողների ակտիվ հետադարձ կապի ապահովման նպատակով:

Մանկավարժները պետք է խրախուսեն ծնողներին, նրանց տեղեկացնեն, թե ի՞նչ է կատարվում երեխայի կյանքում, խոսեն այն ընթացիկ պրոցեսների մասին, որոնք կարող են ազդեցություն գործել դպրոցում երեխայի առաջընթացի վրա: Հանրակրթական հաստատությունը հստակ տեղեկություն պետք է հաղորդի ծնողներին սպասվող արդյունքների մասին, դպրոցի պլանավորած միջոցառումների, գոյություն ունեցող կարգապահական նորմերի, գնահատման գործիքների և դպրոցի նպատակների մասին: Տնօրենը և ուսուցիչը ծնողների հետ դրական հաղորդակցման կանոնավոր գրաֆիկ պետք է կազմեն:

Դպրոցը պետք է ապահովի ծնողների հետ առաջին շփման դրական լինելը և այդ ժամանակ պետք է նկատի առնվի լեզվական խոչընդոտը և մշակույթային տարբերությունը: Երբ ծնողի և դպրոցի հաղորդակցումը կանոնավոր և արդյունավետ է, աճում է ծնողների ներգրավվածությունը, նրանց կողմից դպրոցի գնահատումը բարձրանում է և ձևավորվում է դպրոցի նկատմամբ դրական կապվածություն: Բնական է, օգտագործված ռազմավարությունները հարմարեցված պետք է լինեն դպրոցական հասարակությանը: Եթե ընտանիքները չունենան որակավոր համացանց, եթե էլ-փոստով չստանան հղումներ, եթե վրացալեզու հեռախոսային տեղեկությունը հասկանալի չլինի ադրբեջաներեն կամ հայերեն լեզվով խոսող ծնողներին՝ հաղորդակցությունը չի կարող բարելավվել: Դպրոցները հաղորդակցության այնպիսի ստրատեգիաներ պետք է կիրառեն, որոնցում կարևոր ասպեկտները ծնողների համար հասկանալիորեն հաղորդվելն է, և նրանց խրախուսելը դեպի զարգացած և ակտիվ ներգրավում: Մեր հետազոտության թեմայի ընտրությունը պայմանավորված է ուսուցչի մասնագիտական գործունեության կատարելագործման արդյունավետության ապահովման արդի ժամանակաշրջանի հրամայականով:

Թեմայի հետազոտության նպատակը: Հետազոտության նպատակն է ընդգծել ուսուցչի համագործակցությունը սովորողների ծնողների կամ նրանց օրինական ներկայացուցիչների հետ՝ սովորողների կրթության կազմակերպման և ընտանեկան դաստիարակության հարցերում:

Հետազոտության խնդիրն է բացահայտել այն արդյունավետ եղանակներն, որոնց միջոցով ուսումնական հաստատությունում գործընկեր ուսուցիչի և ծնողների միջև տեղի է ունենում համագործակցություն, փորձի փոխանակում:

Հետազոտության օբյեկտը և առարկան: Հետազոտության օբյեկտ է հանդիսացել կրթական համակարգը, իսկ առական՝ ուսուցիչների մասնագիտական գիտելիքների կատարելագործման հնարավորությունը ծնողների հետ փոխգործակցության համատեքստում:

Հետազոտության կառուցվածքը: Հետազոտական աշխատանքը բաղկացած է ներածությունից, հիմնական մասից, եզրակացությունից, ինչպես նաև օգտագործված գրականության ցանկից:

Ուսուցչի համագործակցությունը սովորողների ծնողների կամ նրանց օրինական ներկայացուցիչների հետ՝ սովորողների կրթության կազմակերպման և ընտանեկան դաստիարակության հարցերում

Ինչպես գիտենք, ուսումնական գործընթացի մասնակից են հավարվում սովորողը, սովորողի ծնողը կամ օրինական ներկայացուցիչը և ուսուցիչը: Վերջիններիս իրավունքներն ու պարտավորությունները սահմանված են օրենքով: Ուսուցչը ուսումնական գործընթացի հիմնական կազպակերպիչն ու իրականացնողն է, ով մեծագույն պատասխանատվություն է կրում սովորողի չափորոշչային վերջնարդյունքներին հասնելու համար: Սակայն այս տեսակետից շատ կարևոր է նաև սովորողի ծնողի կամ օրինական ներկայացուցչի պատասխանատու վերաբերմունքը կրթական գործընթացին, վերջինիս կողմից ուսուցչի հետ համագործակցելու, սովորողին վերահսկելու ու առաջնորդելու գործառույթը:

Ծնող-ուսուցիչ հաղորդակցությունը մեծ դեր է խաղում սովորողի կրթության որակի բարելավման համար, քանի որ ծնողներն ու ուսուցիչները հաղորդակցության ու համագործակցության ընթացքում միասին են սկսում հետազոտել սովորողի անձնային առանձնահատկությունները, ցանկություններն ու երազանքները, ինչը թույլ է տալիս վերջիններիս ավելի խորքային ճանաչել սովորողին ու հաշվի նստել նրա պահանջմունքների հետ:

Ուսուցիչը սովորողի ընտանիքը ճանաչում է հենց նրա աչքերով, ավելին սովորողի վարքը հաճախ ուսուցչի ներկայությանմ կարող է տարբեր լինել, ուստի այս պարագայում մշտական կապը սովորողի ծնողի հետ թույլ կտա անուղղակի կերպով կառավարել սովորողին: Կարծում ենք այս մշտադիտարկումը շատ կարևոր է, որպեսզի համագործակցող կողմերը կարողանան վտահ լինել, որ սովորողը իրենց երկուսի հետ էլ ազնիվ է և որևէ զարտուղի ճանապարհ չի գտնի անթույլատրելի արարքներ գործելու համար: Այստեղ շատ կարևոր է կողմերի միջև անվերապահ վստայիությունը:

Ծնողի համար ուսուցչի ու դպրոցի հետ մշտական կապը շատ կարևոր է, քանի որ դա նրան թույլ է տալիս մշտապես տեղեկություն ստանալ իր երեխայի մասին՝ լինի դա ուսումնառության հետ կապված դժվարությունների, հասակակիցների հետ խնդիրների, վարքային շեղումների, թե կրթական ձեռքբերումների մասին: Սովորողի բնականոն զարգացման ու դաստիարակության գաղափարն է միավորում ծնողներին և ուսուցիչներին, ուստի համագործակցությունը պետք է ուղղված լինի հենց այդ գաղափարի բնականոն ու արդյունավետ իրականացմանը: Ծնողների ներգրավվածությունը սովորողի

դպրոցական կյանքին ոգևորիչ է նաև ուսուցչի համար, քանի որ դժվարությունների առաջացման ժամանակ, վերջինս կարող է հույս դնել ծնողական օգնության վրա:

Երբ ծնողը ներգրավված է զավակի կրթության գործընթացում, աշակերտն ունի ավելի բարձր ակադեմիական առաջադիմություն, քննությունների և թեստերի ավելի լավ արդյունքներ: Այդ նույն ժամանակ բարելավվում է հաճախման ցուցանիշը, աշակերտի մոտ զարգանում են սոցիալական հմտությունները և նրա վարքը դրական է դառնում ինչպես տանը, այնպես էլ դպրոցում: Սրանք այն շատ կարևոր գործոններն են, որոնք ազդում են աշակերտի վրա ինչպես դպրոցում ուսանելիս, այնպես էլ ապագա մասնագիտական գործունեության ընթացքում: Սակայն, ինչպե՞ս կարող են ծնողները արդյունավետ ներգրավվել դպրոցական կյանքին, և ինչպես կարող է դպրոցը նպաստել նրանց ներգրավվածությանը: Իրականում, ի՞նչ է նշանակում «ծնողների ներգրավվածություն»:

«Ծնողների ներգրավվածություն» տերմինը նշանակում է միասնական և անընդմեջ պատասխանատվություն աշակերտի հաջողությունների և ուսման բարելավմանը ինչպես տանը, այնպես էլ դպրոցում: Այն միավորում է ծնողներին և ուսուցիչներին, որպեսզի նրանք միահամուռ ուժերով նպաստեն աշակերտի ակադեմիական առաջադիմության բարելավմանը: «Ծնողների ներգրավվածություն» նշանակում է ծնողների մասնակցություն կանոնավոր, բազմակողմանի կապերում, աշակերտի ուսման գործընթացում և դպրոցի այլևայլ միջոցառումներին:

- Ծնողները կարևոր դեր են խաղում որդու ուսման գործընթացում.
- Ծնողները մասնակցում են դպրոցի կազմակերպած միջոցառումներին.
- Ծնողները զավակների ուսման գործընթացում ներգրավված են որպես լիիրավ գործընկերներ և մասնակցում են երեխայի կրթության մասին որոշումների ընդունմանը «Ծնողների ներգրավվածությունը» ծնողների համար կարող է նախատեսել.
- Դպրոցական միջոցառումներին հնարավորինս շատ մասնակցություն.
- Երեխայի կողմից լավ կատարված աշխատանքի խրախուսում և գովաբանում ծնողի կողմից.
- Դպրոցի համար ռեալ պահանջների նախանշում.
- Ուսուցիչների հետ կանոնավոր հանդիպումներ և իրենց երեխաների առաջընթացի քննարկում.
- Տնային առաջադրանք կատարելիս աշակերտին օգնության ցուցաբերում.
- Տնօրենների և ուսուցիչների համար ծնողի ներգրավումը դպրոցական կյանքում նշանակում է.

- Ծնողներին իրենց երեխաների առաջընթացի մասին համապատասխան տեղեկատվությամբ ապահովում.
- Ծնողների համար տեղեկատվության հաղորդում դպրոցի միջոցառումների մասին.
- Պարբերաբար հանդիպումների կազմակերպում աշակերտների առաջընթացի քննարկման նպատակով.

Կարևոր է իմանալ, որ «ծնող» ասելով չպետք է հասկանալ միայն մայր կամ հայր: Ծնող կարող ենք անվանել այն բոլոր անձանց, ովքեր ներգրավված են երեխայի դաստիարակման գործում: Որպես օրենք, հայրն ու մայրը հոգում են երեխայի դաստիարակման ու կրթության համար, սակայն նրանցից բացի, հաճախ երեխայի դաստիարակման հարցում պատասխանատվություն են կրում տատիկը, պապիկը, մորաքույրը, հորաքույրը, հորեղբայրը, խորթ մայրը, խորթ հայրը, խնամակալը, դայակը և այլն: Այս փաստաթղթում «ծնող» տերմինը նկատի ունի բոլոր այն անձանց, որոնք պատասխանատու են երեխայի դաստիարակման ու բարօրության համար:

Ծնողների հետ մշտական կապի մեջ լինելու, հնարավոր խնդիրները, դասարանում առկա կազմակերպչական հարցերը քննարկելու համար դասարանի ղեկավարը սահմանված կարգի համաձայն պետք է անցկացնի ծնողների հետ ընդհանրական հանդիպումներ՝ ծնողական ժողովներ: Սա այն հարթակն է, որտեղ թե՛ ուսուցիչը, թե սովորողի ծնողը՝ հայրը, մայրը, օրինական ներկայացուցիչը, ունեն հնարավորություն ուղիղ հաղորդակցման: Ծնողական ժողովը ծնողների հետ աշխատանքի հիմնական ձևն է, որի միջոցով լուծվում են դասարանական ժողովների ժամանակ առաջացած խնդիրները, քննարկվում են սովորողների հնարավոր վարքային, կրթական և այլ բնույթի հարցերը: Փորձենք հասկանալ թե ինչու է այնուամենայնիվ հարկավոր հավաքել ծնողներին: Առաջին հերթին հարկավոր է ստանալ այնպիսի տեղեկություններ որոնք անհրաժեշտ են երեխաների հետ աշխատելիս: Հայտնի է, որ ով գիտի կարևոր տեղեկություններ երեխաների մասին, նա էլ տիրապետում է դաստիրակչական իրավիճակին: Դասղեկի համար այդպիսի տեղեկությունները նրա մասնագիտական հարստությունն են, որոշումներ ընդունելու հիմքը: Այդ առումով ցանկացած ժողովի համար անհրաժեշտ է նախապատրաստել ծնողներին տրվող հարցեր:

Ընտանիքը, որպես դաստիարակության միջավայր, նրա ազդեցությունն անձի դաստիարակության գործընթացի և արդյունքների վրա շատ կարևոր են երեխայի բնականոն զարգացման համար: Սա այն միջավայրն է, որտեղ ծնվում ու աշխարհաճանաչողության սկզբնական քայլերն է անում մանուկը, պատանին

դեռահասը, ուստի ծնողի, ընտանեկան միջավայրի ուղիղ ներգործությունը ողջ կյանքի վրա ունենում է մեծ ազդեցություն:

Երեխայի նկատմամբ իրականացվող ցանկացած գործողություն պետք է բխի նրա լավագույն շահերից: Երեխայի լավագույն շահերի ապահովումն ուղղված է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և օրենքներով ամրագրված՝ երեխայի իրավունքների արդյունավետ և ամբողջական իրականացմանը, ինչպես նաև երեխայի զարգացմանը՝ հաշվի առնելով երեխայի մտավոր և ֆիզիկական կարիքները, այդ կարիքների բավարարման համար համապատասխան խնամքի և դաստիարակության հնարավորությունը, ընտանիք վերադառնալու կամ ընտանիքի հետ ապրելու կարևորությունը, երեխայի զարգացման համար ծնողի և ընտանիքի այլ անդամների հետ շփվելու կարևորությունը, ազգային պատկանելության հարցը, երեխայի մշակութային, լեզվական, հոգևոր կամ կրոնական կապերը կամ դաստիարակությունն ու նշանակությունն ընտանեկան միջավայրում և այլ կարիքները, պահանջները և շահերը (այսուհետ՝ Երեխայի լավագույն շահեր) :

Կարևոր հանգամանք է երեխայի կարգավիճակը ընտանիքում: Այս հարցը նույնպես պետք է դնել ընտանիք-դպրոց համագործակցության ակունքում: Այս մասով իր կարևոր դերակատարում ունի ունի ուսումնական հաստատության սոցիալական մանկավարժը: Սոցիալական մանկավարժը, համագործակցելով բազմամասնագիտական խմբի մյուս մասնգետների հետ, ուսումնասիրում է սովորողների կյանքի պայմանները, ընտանիքի առանձնահատկությունները, ընտանեկան փոխհարաբերությունների ազդեցությունը սովորողի վրա, նրանց սոցիալական միջավայրը, շփումները, հետաքրքրությունները, հաղորդակցման դժվարությունները, սոցիալական միջավայրում հարմարման և պաշտպանվածության մակարդակը, դուրս է բերում կարիքները և դրանց համապատասխան կազմում է միջամտության պլան, որը ներառում է կարիքների բավարարմանն ուղղված միջոցառումները, ժամկետները, պատասխանատուները:

Տարբեր առարկաներից վերցրած այս բաղադրիչները, որոնք միավորվում են մեկ դասի մեջ, կազմում են մեկ համակարգ, որի շուրջ հավաքվում և մի նոր համակարգ է դառնում ուսումնական նյութը: Որպեսզի ինտեգրվեն, այսինքն՝ ճիշտ ձևով միավորվեն ուսումնական գործընթացի բաղադրիչները, պետք է կատարվեն այնպիսի գործողություններ, որոնք ի սկզբանե ունեն ստեղծագործական բնույթ: Այս նախապատրաստական գործունեության ընթացքում առանցքային նշանակություն ունեն ուսուցիչների համագործակցելու, իրարից սովորելու, ընդհանուր նպատակներ ու խնդիրնել գտնելու կարողությունները: Նախապատրաստական գործունեության ընթացքում ուսուցիչը որոշում է.

• ինտեգրված դասի անցկացման իր դրդապատճառներն ու նպատակը;

• համակարգ ձևավորող բաղադրիչների մեջ առաջատարի և երկրորդականի առանձնացումը;

• ինտեգրման ձևը;

• միավորվող նյութերի միջև կապերի բնույթը

• նյութի հաջորդականության կառուցվածքը

• նյութի ներկայացման միջոցները;

• դերերի բաշխումը ինտեգրվող առարկաների ուսուցիչների միջև

• տվյալ դասին սովորողների ուսուցման վերահսկման ձևերն ու տեսակները:

Այսպիսով, ելնելով ինտեգրված դասի տեսակից և ինտեգրվող առարկաների դասերի տիպերից, ուսուցիչները համատեղ կազմում են իրենց դասի նպատակները՝ զուգակցելով ընդհանուրը մասնավորի հետ, շաղկապելով ինտեգրվող նյութի բովանդակությունները տարբեր առարկաների տեսանկյուններից:

Ուսուցման գործընթացում կարևոր տեղ պետք է հատկացնել միջառարկայական կապերին, որոնք ուսուցման հաջողության անհրաժեշտ պայմաններից են: Միջառարկայական կապերի մասին Յ.Ա.Կոմենսկին իր «Մեծ դիդակտիկա» աշխատությունում նշում է, որ ուսումնական առարկաների փոխկապակցված ուսուցումը երեխաներին սովորեցնում է բացահայտել ուսումնասիրվող առարկաների և երևույթների միջև եղած կապերը. «Ամեն ինչ ամրապնդել բանականության հիմունքներով նշանակում է ամեն ինչ սովորել՝ մատնացույց անելով պատճառները, այսինքն՝ ոչ միայն ցույց տալ, թե ինչպես է այս կամ այն բանը տեղի ունենում, այլ նաև ցույց տալ, թե ինչու դա այլ կերպ լինել չի կարող: Չէ՞ որ իմանալ որևէ բան նշանակում է իրը ճանաչել իր փոխկապակցվածության մեջ»: Միջառարկայական կապեր գոյություն ունեն հատկապես տեխնոլոգիա, մաթեմատիկա, երկրաչափություն, կերպարվեստ, ֆիզիկա առարկաների միջև: Այդ առարկաներից յուրաքանչյուրի ուսուցման ընթացքում ձեռք բերված գիտելիքները, ունակությունները և հմտությունները լայնորեն կիրառվում են մյուս առարկաների ուսուցման գործընթացում: Այստեղ կրկին պետք է կարևորենք ուսուցիչների փոխգործակցությունը, մի նպատակի համար կոլեկտիվ աշխատանքը :

Հիմնավորվում է, որ կրթության ոլորտում իրականացվող բարեփոխումների և ինովացիաների արդի պայմաններում ուսուցիչների մասնագիտական զարգացման և դրա հիման վրա մանկավարժական գործունեության կատարելագործման յուրահատկությունը պայմանավորված է ժամանակակից սոցիալմշակութային դինամիկ իրավիճակով, ուսուցչի մասնագիտական դիրքորոշմամբ և

հասարակության զարգացման մեջ իր դերի նկատմամբ մեծագույն պատասխանատվությամբ:

Հիմք ունենալով այս յուրահատկությունը՝ կարելի է առանձնացնել ուսուցչի մասնագիտական դիրքորոշումները՝ ուսուցիչ-մասնագետ, ուսուցիչպրոֆեսիոնալ, ուսուցիչ-դաստիարակ: Մասնագիտական դիրքորոշումները՝ որպես անհատական դինամիկ որակներ, ինտեգրում են ուսուցչի գիտակցական ուղղվածությունը, պրոֆեսիոնալ վարքը, անձնային և մասնագիտական արժեքները: Դրանք անմիջականորեն կապված են ուսուցչի անհատական մանկավարժական և մեթոդական մշակույթի զարգացման մակարդակի հետ և համարվում են նրա մանկավարժական արդյունավետ գործունեության գրավականը: Ներկայացված են այն կոմպետենցիաները, որոնց պետք է տիրապետի ուսուցիչը մասնագիտական պատրաստության, մանկավարժական գործունեության և վերապատրաստման արդյունքում: [1]

Մենք կարծում ենք, որ ուսուցչի գործունեության մասնագիտական արդյունավետության խթանիչներ են՝

- ուսուցչի կազմակերպչական և ստեղծագործական ընդունակությունների զարգացման մակարդակը,
- ինքնուրույնությունը,
- դպրոցում ստեղծագործական-կրթական միջավայրի առկայությունը,
- ուսուցչի կողմից առաջարկվող նորամուծությունների արժևորումը և ներդրման հնարավորությունների ապահովումը,
- ուսուցչի աշխատանքի գնահատումը և նրա մասնագիտական աճի հնարավորությունների ապահովումը դպրոցի կառավարման սուբյեկտների կողմից:

Հիմնավորվում է, որ ուսուցչի մանկավարժական գործունեության արդյունավետությունը պայմանավորված է մանկավարժական վարպետությամբ, որի ձևավորումն սկսվում է բուհում և շարունակվում դպրոցում մանկավարժական բազմամյա գործունեության ընթացքում: Անկասկած է, որ ուսուցիչների մանկավարժական վարպետության կատարելագործման և դրա հիման վրա մանկավարժական գործունեության արդյունավետության բարձրացման հիմնական միջոցը դպրոցում կազմակերպվող աշխատանքներն են:

Վերջին ժամանակներում մանկավարժական գիտության մեջ և մասնագիտական կրթության ոլորտում մեծ տարածում և կիրառություն են գտել

---

[1] Ղույումչյան Գ., Մանկավարժություն, երկու գրքով: 2-րդ գիրք, Եր., «Զանգակ-97», 2005, էջ 133

«մասնագիտական կոմպետենտություն» և «մանկավարժական կոմպետենցիաներ» հասկացությունները:

Կոմպետենտություն (կարողունակություն) հասկացությունն ունի լատինական ծագում, competo նշանակում է հասնում եմ, ձգտում եմ, համապատասխանում եմ: Ս.Ի. Օժեգովի բառարանում կոմպետենտը մեկնաբանվում է որպես «որևէ ոլորտում գիտակ, բանիմաց, տեղեկացված, իսկ կոմպետենցիան՝ հարցերի ամբողջություն, որոնցում ինչ-որ մեկը լավ տեղեկացված է»:[2]

Որպեսզի դաստիարակչական գործընթացն ընտանիքում անցնի արդյունավետ, հարկավոր է, ու ծնողներն առաջին հերթին բացառեն որևէ բռնություն, վատ կամ բացասական ներգործություն երեխայի վրա: Սա կարող է կազմաքանդել սովորողի բնականոն հոգեկան զարգացումն ու անդառնալի հետևանքներ ունենալ: Դաստիարակության գործում միշտ, այսօր առավելապես, կարևորվել է կարևորվել է երեխայի նկատմամբ ծնողի ճիշտ դրսևորուները: Ծնողական սերն ու հոգատարությունը կենսական անհրաժեշտություն են երեխայի գոյապահպանման համար:

Մեթոդական մասնախմբերի խնդիրն է գործընկերների հետ փոխգործակցության միջոցով օգնել ուսուցչին՝ հաղթահարելու դժվարությունները, միջանձնային հարաբերություններում ծագած խնդիրները, մշակել ինքնակրթության ծրագիր, ապահովել մանկավարժական առաջավոր փորձի փոխանցումը£

Բացահայտված են դպրոցում սկսնակ ուսուցչի աշխատանքում առկա թերությունները: Մեր հետազոտությունները ցույց տվեցին, որ թերություններ առկա են ինչպես ուսուցչի գործունեության, այնպես էլ մասնագիտական պատրաստության և վարքի դրդապատճառների մեջ: Օրինակ՝ գործունեության ոլորտում դրսևորվող թերություններից են՝

- դասի կազմակերպման միօրինակությունը,
- աշակերտների նկատմամբ անհատական մոտեցում չցուցաբերելը, • աշակերտների ակտիվությունը չխթանելը,
- մանկավարժական տակտի պակասը,
- իր մասնագիտության նկատմամբ հարգանքի պակասը,
- իր մասնագիտական գործունեության նկատմամբ ոչ բավականաչափ հետաքրքրությունը,
- ուսուցման գործընթացի կազմակերպման հոգեբանամանկավարժական պահանջներին չտիրապետելը,

[2] Ս. Ժ. Արշակյան, Գիտական տեղեկագիր, Դասավանդման մեթոդիկա, Երևան, 2014, էջ 55

- ուսուցման և դաստիարակության նորագույն տեխնոլոգիաներին չտիրապետելը, որի պատճառով նվազում է սովորողների հետա- քրքրությունն առարկայի նկատմամբ,
- ուսուցչի ինքնատիրապետման և ինքնառեֆլեքսիայի ցածր մակարդակը,
- հումորի զգացման պակասը:

Հակառակ դեպքում մի կողմից անտարբերությունն ու եսասիրությունը, մյուս կողմից ծնողական սիրո բացակայությունը հանգեցնում են ատելության, արհամարանքի՝ ծանրացնելով թե' երեխայի, թե' ծնողի կյանքը : Այսօր դպրոցում լրջագույն խնդիրներ են առաջանու�՝ կապված ծնողների որոշ մասի ինքնադաստիարակության հարցերի հետ, ուստի սովորողների հետ ունեցած որոշակի դժվարությունների հիմնական դրդապատճառները կարելի է փնտրել հենց ծնողների մեջ:

Ընտանիքը փոքրիկ հասարակություն է, որի ամբողջականությունից է կախված մարդկային ամբողջ մեծ հասարակությունը: Կարգապահության լավագույն դպրոցը հենց ընտանիքն է, որի գլխավոր իմաստն ու նպատակը երեխաների դաստիարակությունն է: Իսկ երեխաների դաստիարակության գլխավոր դպրոցը ծնողների փոխհարաբերություններն ու վերաբերմունքն է միմյանց նկատմամբ: Ուստի, ընտանեկան դաստիարակության շատ դժբախտությունների արմատները թաղված են հենց այնտեղ, ուր ծնողները երեխային մանկությունից չեն սովորեցրել ղեկավարել սեփական ցանկությունները, չեն սովորեցրել ճիշտ վերաբերվել մեծերին, բարեվարք պահել շրջապատում:

Առանց ընտանեկան ճիշտ դաստիարակության դպրոցում սովորողին կառավարելն ու վերահսկելը անչափ դժվար է ուսուցչի համար: Այն ծնողներն են շահում, ովքեր երեխաների դաստիարակությունն իրականացնելիս ամեն ինչի չափը դարձնում են սովորույթ, բնավորության գիծ, ամենօրյա կանոն, ու դրանցով այնպես են առաջնորդվեւմ, ինչպես օրենքը հարգող դատավորը: Ծնողները դասղեկի, ուսուցիչների անմիջական օգնությանմբ պարտավոր են սիրո զգացմունքներ դաստիարակել :

Ծնողը պիտի ընկեր լինի իր երեխայի համար, հաճախակի զրուցի նրա հետ կյանքից, բարուց ու չարից, լավ ու վատից, հասարկությունից, արժեքներից, հայրենիքից, ծնողից, տնից, հազար ու մի կարևոր մանրուքներից: Այս բոլորն էլ ի վերջո կկազմեն այն դաստիարակությունը, այն արժեքային համակարգը, որ ծնողը կփոխանցի իր երեխային: Հաճախ ենք տրտունջներ լսում դասարանում սովորողների վարքից, կարգապահությունից:

Իսկ ի՞նչ ակնկալիք կարելի է ունենալ նման սովորողներից, ովքեր դասերին հաճախում է հենց այնպես, առանց ուշադրության, առանց պատասխանատվության տարրական զգացումի, անտարբեր են դասարանի մաքրության, աշխատանքային սեղանի կոկիկության, գեղեցիկ ձեռագրի և այլ նմանատիպ կարևոր մանրուքների նկատմամբ: Ի՞նչ ակնկալել այն աշակերտից, որ դպրոց է գալիս զուտ ընկերներին տեսնելու, նրանց հետ չարաճճիություններ անելու և ուրախ ժամանակ անցկացնելու համար:

Նման աշակերտին կարելի է փրկել միայն Ճիշտ ու կանոնավոր դաստիարակությամբ, իսկ այստեղ կրկին կցանկանանք կարևորել ծնող-դպրոց կապը:

Այսպիսով, կարծում ենք, որ որևէ կերպ չի կարելի անտեսել ծնողին: Եթե վերջինս չի պատկերացնում սեփական երեխայի ուսումնական հարցերում իր կարևոր դերակատարումը, ապա հարկավոր է, որ ուսուցիչը սկսի հենց այդ կետից՝ ծնողին բերել համագործակցային դաշտ: Ուսումնասիրելով սույն հետազոտության թեման՝ ձեռք բերեցինք ավելի խորքային գտելիքներ, որոնք, վստահաբար, կաջակցեն մեզ մեր հոտագա մանկավարժական գործունեության ընթացքում:

Եզրակացություն

Հաճախ դպրոցները ծնողներին չեն ներգրավում իրենց գործունեության մեջ, մտածելով, որ նրանք գլուխ չեն հանի դրանից: «Սա արդեն նախնական սխալ կարծիք է: Ուսուցիչները գտնում են, որ ընտանիքները չեն ցանկանում մասնակցություն ունենալ, այնինչ, իրականում ընտանիքները չգիտեն ինչպես մասնակցել» հայտարարեց Կարեն Սալինասը (դպրոցի, ընտանիքի և հասարակության հետ գործընկերության կենտրոնի կապերի տնօրեն, Ջոն Հոպկիսի համալսարան, դպրոցում ծնողների ներգրավվածությանը ամենաազդեցիկ աջակցողներից մեկը): Իր հերթին ծնողները երբեմն ձեռնպահ են մնում դպրոցի կյանքին ներգրավումից, քանի որ նրանք ազատ ժամանակ քիչ ունեն կամ, որովհետև նրանք լավ չեն խոսում վրացերեն, ինչպես նաև մեծ հիմնախնդիր է հաղորդակցման պակասը դպրոցի և ընտանիքի միջև: Ծնողները գտնում են, որ նրանց դպրոցում սիրով չեն սպասում: Սա, մասնավորապես, հաճախ բացասական փորձի հետևանք է, որը մտածելու տեղիք է տալիս, որ ծնողի ներգրավվածությունը դպրոցական կյանքին դրական արդյունք չի տալիս: Ծնողների ներգրավվածությունից ստացված օգուտը պարզ է: Հետազոտությունները ցույց տվեցին, որ ծնողների ներգրավվածությունը ոչ միայն բարելավում է աշակերտների վարքն ու հաճախումը, այլև դրականորեն է ազդում աշակերտների ձեռբերումներին: Չնայած սրան, շատ դպրոցներ դեռ փորձում են որոշել և չափել ծնողների գործնական մասնակցությունը և դրանցից շատերը չեն զգում, որ նրանց ջանքերը հաջողություն բերեցին: Ամերիկյան ուսուցիչների վերջին ժամանակներում անցկացրած հարցումների արդյունքում բացահայտվեց, որ նոր մանկավարժների 20 տոկոսը և տնօրենների համարյա մեկ քառորդը ծառայողական սթրեսի կարևոր պատճառը համարում են իրենց՝ ծնողների հետ հարաբերությունները:

Օգտագործված գրականության ցանկ

1. Թորգոմյան Լ. Վ., Մանկավարժական արժեբանության հիմունքներ, Եր., Ան–Ջոն, 2011, էջ 132
2. Ղույումչյան Գ., Մանկավարժություն, երկու գրքով: 2-րդ գիրք, Եր., «Զանգակ-97», 2005, էջ 133
3. Ս. Ժ. Արշակյան, Գիտական տեղեկագիր, Դասավանդման մեթոդիկա, Երևան, 2014